

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

29.08.2014 թ.

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի Փրկարար ծառայությունն ու ՀՀ Կոտայքի մարզպետարանը համատեղ կազմակերպել են <<ՀՀ Կոտայքի մարզում ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը և երկրաշարժի հետևանքների վերացման ժամանակ մարդկանց և կենդանիների շրջանում ծագած համաճարակային արձագանքման կազմակերպումը>> թեմայով ուսումնավարություն:

Ուսումնավարությունը նպատակ է ունեցել կատարելագործել մարզում բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը, և պատասխանատու պաշտոնյաների գիտելիքների խորացումն այդ ուղղությամբ: